


ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ
Ե. ՓՈՐՈՍՅԱՆ

Կամակ կամ որ եւ է
գրութիւն պէտք է ուղղել աւ
Տնօրին. ԱՐՇԱԼՈՅՍ րազրի
ԳԱՀԻՐԷ (Եգիպտոս)

E. TOROSSIAN
Direc. propr. du journal arménien
ARCHELOUICE
LE CAIRE (EGYPTE)



ԱՐՁԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԱՐԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ

ԵԿԻՊՏՈՍԻ ՀԱՍՏԱՐ	
Տարեկան տղ զանկե	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան	20
Վեցամսեայ	12

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԿԱՆԻՍՏԱՆԻ
Եւ թղթատարի ծախքը
Խնայարարական վրայ է
Խնայարարական շրջանում
գրքերի կէս չեն տրուիր
*
ԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ
Կանխիկ վճարելի է

ԻՐԱԿԱՆ ԿԱՆ ԱՂԻ

ԱՐՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ Գրաքառ
Անդրանիկ Գրաքառի կր խնդրուի որ քա-
ռեկանին նախորդ տարիէն մնացեալ պար-
տոց կէտելով որկել նախ իրենց ԵՐԿՐՈՐԻ
Տարեգրքակի քառամսորագիրը, եւ հարկ
չը քորով մասնաւոր դիմումներու, որոնք
նոր դիմումարկին մը պիտի ըլլան ԱՐՏԱ-
ԿԱՆՈՒ առդէն քննարկագրաց Տնօրինութեան:

ԱՂՔԱՏԱԽՆԱՄՆԵՐԸ

Անուրանալի է որ Եգիպտոսի ձմեռը
չենք կրնար բաղդատել Կ. Պոլսոյ կամ
Հայկական գաւառներու ձմեռան. Երբ Գա-
հիրէի մէջ առտուն ժամ մը եւ մայրամուտ-
քէն երկու ժամ ետքը մի քիչ շուտ քայլե-
լու պէտքը կ'զգան... Ենհարակազմերը
միայն կրնանք երեւակայել որ շուրթներ
կը կապուտան Գարաքէօյի կամուրջին վրայ
եւ մարդիկ կը սառին Հայաստանի դաշտե-
րուն մէջ:

Այս ճամբորդութեան առջեւ կարելի է
ըսել որ Եգիպտոս ձմեռ չունի, մեր գա-
ղութիւն համար: Բայց կլիմայի այս մեղ-
մութիւնը պատճառ մը չ'կրնար ըլլալ որ
օրերը իրարու չ'յաջորդեն եւ գիշերները
նմանապէս: Ժամանակին այս անընդհատ
թաւալունը կամայ սկիւնայ մեղ կը հաս-
ցնէ այնպիսի հանդիսաւոր օրերու, որոնք
կերպով մը կը բռնանան մեր վրայ, աւե-
լի ուշադրութեան առարկայ ընելու համար
մեր տուններու մեծ եւ պզտիկ բնակիչները:

Այս փոքրաթիւ ժողովուրդին իւրա-
քանիստ անհատը բան մը կուզէ Կարանդին,
Ծնունդին, իւրաքանչիւր փափաք մը կ'ար-
տայալոյտ օրեր շաբաթներ առաջ. փափաք-
ներ՝ տրոնց գոհացումը թոթով լեզուներէ,
պաշտելի շուրթներէ, պատկառելի բերան-
ներէ բղնող շտորակալութեան, երախտա-
տնդիտութեան ներդաշնակ արտայայտու-
թիւններով մեղ կ'զմայլեցնէ, կը կերպա-
րանափոխէ: Այն միջոցին անկարագրելի
երանութիւն մը կ'զգանք մեր վրայ. երա-
նութիւն որ՝ աւաղ, խիստ վաղանցուկ
կեանք մ'ունի, կորսուելու սահմանուած
ըլլալով հետեւեալ օրուան կեանքի անվերջ
պայքարին մէջ:

Վաղանցուկ կամ ոչ, բաւական է որ
մեզի պահ մը կը մոռցնէ աշխարհն ու իր

թշուառութիւնները. եւ թերեւ մեզի նոր
ուժ մը կը պարզուէ շարունակելու համար
մեր առօրեայ զբաղումը:

Բայց թէ՛ մեր գաղթավայրերու եւ թէ՛
բնագաւառներու մէջ ունինք դժբաղդ եղ-
բայրներ, որոնք այդ վաղակորոյս երջան-
կութիւնն ալ անկարող են վայելելու փոքր
ի շատէ ժպտեցնելով երկրահակ գլուխներ,
պաղատալի աչքեր: Ունինք այրիներ, որ-
բեռ, որբուհիներ աշխարհիս ամեն կողմը,
ցերեւցան: Անոնք ոչ ոք ունին իրենց վրայ
խորհելու, իրենց արտօսը օրեւելու, զի-
րենք խրախուսելու, իրենց գառնաթոյն
կենցաղը գէթ բոպէ մը մոռցնելու...:

Մեզմէ ոչ ոք պիտի ուղէր ճամբուն
վրայ հանդիպել այդ խղճալիներէն մէկուն
այդ հանդիսաւոր օրերը:

Ահա այդպիսի բաղդազուրկ եղբայրնե-
րու եւ քոյրերու համար է որ մեր Աղքա-
տախնամները ունին իրենց գոյութիւնը:
Այդ ընկերութիւնները կը գործեն անձայն,
անշուղի Գահիրէ, Աղեքսանդրիա, Պու-
կարիա եւ կարծեմ՝ Ռումանիա, Ամբրիկա,
վերլապէս այն ամեն տեղ՝ ուր Հայ գաղ-
թականութիւն մ'ունինք: Յիշեալ ընկերու-
թիւններու պատուարժան վարիչներէն սմանք
գիտեն թէ՛ ո՛ր թաղի, ո՛ր տան մէջ կը ծ-
կուած են եւ ակնկառոյց իրենց օգնութեան
կ'սպասեն խել մը դժբաղդներ, որոնք
թերեւ լաւագոյն օրերու նաւաբեկեաներ՝
ինքնինքնին անզօր կ'զգան բաց է բաց
գիմուտներ ընելու:

Աղքատախնամները յօժարակամ կ'սփո-
փեն այն թշուառները, ո՛չ գիշեր, ո՛չ
ցորեկ, ո՛չ ցուրտ, ո՛չ բուք չեն կրնար
զանոնք կասեցնել իրենց պարտականու-
թեան մէջ: Բայց որպէսզի անոնց այս
անվճատ գործունէութիւնը արգիւնաւոր
ըլլայ, պէտք է որ ժողովուրդը միանգամ
ընդ միշտ համազուի որ այն լքեալները
իրեն հարաչառ քոյրերը, եղբայրներն են:

Եւ որպէսզի Աղքատախնամները կարող
ըլլան աւելի բերկրաւիթ կերպով գործե-
լու, պէտք է որ ժողովուրդը իր նուէրը
յետաձգէ մինչեւ վերջին օր:
Որ ողորմի աղբախիկ փոխ սայ Աստուծոյ
Պ.

ԿԵԱՆՔԻ ԱՐԴԱՐ ՊԱՅՔԱՐԸ

Քաղաքական կամ քաղաքավարական լը-
պիրը, անամօթ ձեռակերպութիւններով զիրար
խաբարբիւ, եւ ստրկօրէն մէկուն ոտք տե-
զէն սահեցնելով՝ գրամ շահելու եւ ընտանիք

պահելու մարտը չէ այս օրուն վրայ խօսել
կուզեմ անկողնակալ ոգւով, այս համեստ է-
ջերուն մէջ. կեանքի արդար ու անհրաժեշտ
պայքարն է այն. պայքար՝ որ օր ըստ օրէ
դժուարեմբեր ու բուռն նախամանք մը կ'ստա-
նայ... Կուտելու համար հզօր ըլլալու է, եւ
հզօր ըլլալու համար լաւ ունակութիւններ ու
բարոյացուցիչ սկզբունքներ ունենալ բաւա-
կան կրնայ ըլլալ:

Կուտելու երբէք գոյութիւն պիտի չունենար
եթէ բարոյական մակարդակի մը վրայ սպրեւու-
սահմանուած ազատակամ մարդուն կոյս մտքին
մէջ ճնշէր առաջին փնտռ խորութիւնը. որ
գարեբու հոլովմանց նա ջնջուելու անդ՝ արմա-
տացնէ ու բազմապատկուեցաւ. խաթմոցն ա-
նոր ինկատիպ բնութիւնը, խաթմոցն կազմու-
թիւնը, շղթայից կամար. գիւրի բրու գայն
վառ. անարգ սովորութիւններու, եւ վեր-
ջնապէս՝ մրտնեց, սեւցուց մարդ անուան արեւ-
նի սպիտակափառ ճակատը՝ որ արդարութեան
լուսափայլ կանթեղին ճառագայթներով կը կար-
գանք այսօր հեծեծմամբ «աննկարագիր արա-
րած» քսամնելի բառերը:

Մերը՝ որ հոմանիշ է Աստուած բնին, եւ
որ հոգեբանօրէն կեանքի անմիջական տարբեր
կը կազմէ մարդուն մէջ, եւ անոր նկարագրերը
կը շնորհագարգէ, անօրացաւ հետզհետէ, եւ
տեղի տուաւ խոտան գաղափարներու եւ ձրգ-
տուններու մեր չարաչար գեղձնակներուն պատ-
ճառու: Քաղաքները հոգեոյս սկզբնական նա-
գրագործունէն ու արտայայտութիւնն է: Մտքին
իւրացնող ու ծնող ըջիջներուն յօրինակիք տե-
նելին (*) մաքրութիւնը կարողու ունի ստաց-
ուած գաղափարներու ազնուութիւնէն: Երբ
մարդ իր ազատածին ըլլալը պատրուակ ընելով
գիտնաբար զգացումներու հետապնդել կը զի-
ջանի, եւ կը յարատեւէ անգարձ այդ մտար
ճամբուն մէջ, այլ եւս անխորհրդաբար ու
յանգնօրէն թող չժայթիցնէ յոռի, փցուն
կիրքերու կեդրոն ձեւացուցած խելագամակին
անպարկեշտ դոնէն՝ բերնէն նախաւ, յիտի
խօսքեր արարչութեան սիրակաթ Հեղինակին
բարի ու սուրբ գործերուն եւ զանոնք հիացմամբ
շատապովողներուն դէմ: Սիրոյ պակասութիւնը
Աստուծոյ բացակայութիւնը կը հաստատէ մար-
դուն մէջ: Ստեղծող գիտն էակին ներկայ չըլ-
լալուն արգասիքներն չեն միթէ ատելութիւնը,
նենգութիւնը, վէճը, շաղկապութիւնը, ար-
համարանքը, հպարտութիւնը, յանձնապա-
տանութիւնը, բարկութիւնը, անգիտութիւնը,
հոգեւոր, մտաւոր ու մարմնաւոր սպաննու-
թիւնները, ապերախտութիւնը, մատնութիւնը,
անյագ արծաթախորութիւնը, անհնազանդութիւ-
նը, անժուժկալութիւնը ու անբարոյականու-
թիւնը իր ընդհանուր առմամբ՝ որով, աւաղ,
ողողուած է հիմայ բովանդակ երկիրը, Ահա
սեւ ու տխուր նկարագրերը աշխարհակերպիկ
մարդկութեան՝ որոյ ընդդէմ մարտակրու են
ուժգնաբար ճամբիա բարոյականի տէր ճանչ-
ցուած բարոյախօս անձնաւորութիւնները, Գե-
րեզմանէն խորունկ, եւ տարտարուն լայնար-

(*) Հորիզոն:

ձանի կրակին աւելի խորափոր խորափոր մը բացուած է մեր առջեւ... անբարոյականութեան տղամուտ ու մուծ անդունդը՝ ուր կը գլորին, ափսոս, ամէն օր, գահավիժարար, մեր հարուստ երիտասարդութեան ծաղիկ անդամները: Ձգալուն սրտերը յօշատող սոսկալի տեսարան մ'է այս, բայց աւաղ որ զգայուններն ալ ընդարմացած են, այդ ճնշող մթնոլորտին մէջ կամաւ ապրել փափաքելուն համար: Կեանքի քաղցր ճամբան, որոյ այսպէս եղած ըլլալը կ'ապացուցանէ մեր յաւիտեան ապրելու ջերմ ըզձանքը՝ արեւնի, վշտի ու արցունքի արահետ մը դարձած է: Մարդիկ կուրացած են, դարձած զգոյսի փոխուած է սասպալա ու գեհնիկ զգացումներու դերի ըլլալուն ազգաւ: Եստե՛րներու պահպանողական դրութիւնը փրձացման կը մատնէ հանրութիւնը անզգալարար: Վատ դրութիւն մ'է այդ՝ որոյ չքացումը անշուշտ պիտի տեսնենք ժողովուրդներու գաղափարային յեղակարծ գարթման եւ մտաւրտ աներեւակայելի բարեբոլման մը փամփանակ: Հիմա՛յ երկունքի մէջ է մարդկութիւնը... Խաղաղութեան նշոյլն իսկ չէ մնացած աշխարհի մէջ: Ազգերը բորբոքուն կը հեծնն անիրաւու անճանապարհ մակարաններու ներքեւ, կ'սպակերպուած ժողովրդակործան դրամատէր ընկերութիւնները իրարու դէմ դարան լարելու եւ մէկզմէկ ջնջելու մարմաշովը կը հիւծին. ընտանեկան յարկերու տակ սիրոյ փոխան՝ կ'սգ ու կ'ուր կը սերմանուին յարածամ: ճարտարութեան ու վաճառականութիւնը գրեթէ ձեռնածուներու եւ զօջաքաղ տղուկներու ձեռքը մնացած են: Եկեղեցիները, որ հիմնուած էին համարաշուքութեան, միութեան ու սիրոյ գաղափարը ծաւալելու, քիսիսիսներութեան, դատարկապարտութեան ու շարաշուքութեան խոյնք, թաքտոցներ դարձած են. դպրոցներուն մէջ բացարձակապէս անասուածութիւն ու անբարոյականութիւն կը տիրէ: Ահա՛ արդէ՛ արգաստելի վիճակը մեր հողագունդին վրայ ապրող ինքնայլատեր (*) արարածներուն՝ որոց շարքին վրայ երբ տեւիցենք լրագրապետներն (յաճախ ինքնակոչ) ու հրապարակագիրներն իրենց անհեթեթ գործերով, յայնժամ կ'ունենանք խտացած գլուխ գործոցը մարդկային ներկայ կեանքի կենսագրութեանց: Այս վերջինները՝ որ հանրութեան արդար բողոքին արձագանգն ըլլալու, եւ շինիչ, օգտակար ու բարոյալից յօդուածներով, լուրջ, գիտական ու գեղեցիկ ներկարգութիւններով գաղափարներ ուղղելու, ազնուացնելու առանձնաշնորհու՛մը կը վայելեն, հիմա կը տեսնուի որ ամէն պարտականութիւն ու խղճմտութիւն բարձի թող ըրած են(մանաւանդ Գահիրէի մէջ), բացառութիւնը կը յարգենք:

Երբ լրագրապետներ ու յօդուածագիրներ իրենք իրենցով կ'զբաղին շատ անգամ, իրենց սեփականութիւն համարած (թէ եւ անուղիղ միջոցներով) թերթին մէջ, եւ կամ գեհնիկ գրականութեամբ անբարոյական վիպագրութեամբ ու օձի լեզուով եւ յաճախ հրապարակային սուտերով կը ձգնին յանկուցանել դերախաբ ժողովուրդը, անզգայացնելով իր հասողութեան, զանազանութեան ու զգացման փափակ թեւերը, յաներաւ իրողած կ'ըլլան անոր արեւն քրտինքով շահած գրամը, կամքի, անհասականութեան անխիղճ ու նմանը չտեսնուած թունարարունէ այս որոյ գէմ լուռ մնալու չեն երբէք խօսելու եւ գրելու կարողութեամբ քիչ թէ շատ օժտուող արդարութեան նախանձանդիր ժողովրդի գաւակները:

(Շարունակելի) Գ. Կ. Ո.

(*) Ինքն իր սեռը փոխող, այլայլող:

ՊԱՏԵՐԱԶՍԻ ԴԱՅՏԵՆ

«Պատերազմը ալ իրապէս վերջացած է» կը յայտարարէր ի ձայն փողոյ Լորտ Ռօպերթս «մէկ քանի աւազակախումբերէ գառ», որք շուտով ուժասպառ եղած, կամ հնազանդութիւններն պիտի յայտնեն եւ կամ պիտի ջնջուին ալ

Թրանսվալի եւ Օրանժի մէջէն. Պօէրական բանակ, կամ դիմադրութեան կեդրոն չ'կայ»:

Եւ Մարաշխաթը, շնորհաւորութիւններով, դափնիներով ու տիտղոսներով բեռնաւորեալ, կոռուի դաշտէն մեկնեցաւ Անդղիա վերադառնալու համար, ուր իրեն կ'սպասէին ահագնազորող համակրական ցոյցեր եւ 100,000 հասակ անզղիական ոսկիներ:

Քանտահարի Լորտը, թէ՛ իր միակ որդւոյն վրէժը լուծած էր, եւ թէ՛ Անդղիան տագնապալից կացութիւնէ մը ազատած էր. բնութեանալի է որ երբ ծեր Մարաշխաթը իր ընդհանուր սպարապետ, եւ Լորտ Քիչնէր, իբր սպա-յակոյտի պիտ, կուռ դաշտը հասան, Պօէրներուն բաղդին անիւր մէկէնիմէկ գարձաւ: Բարտալէրիկ պարտութիւնը՝ Պօէրներուն կորսնցընել տուաւ իրենց 5-6 ամուռան յաղթութեան պտուղները, եւ զրկեց երկու հասարակապետութիւնները 3000 քաջամարտիկ ու վարժ զօրքերէ: Յաջողութիւնը չըջառելի շարժումով մը ձեռք բերուած էր. որը Մէթուէնի եւ Պուլլերի պէս զօրավարներ չէին համարձակած ընկելու: Քրօնժի գերի բռնուելովը, բոլոր պաշարեալ քաղաքները աղատուեցան եւ անկէց յետոյ յուսահատութիւնը եւ ձախողութիւնը տիրեց Պօէր շարքերուն մէջ:

Հարաւէն անդղիական զօրաբանակները հովանարի նման բացուելով Ֆրէնչի, Ճօն Համիլթընի, Պրիւս Համիլթընի, Բօլ Քէրիւի, Լիթլըլթընի, Պարթընի եւայլնի հրամանատարութեանց տակ, տարօրինակ արագաշարժութեամբ եւ վերջին ծայր խոհեմութեամբ ու կանոնաւոր շարժումներով, որ հակապատկերն էին Պուլլերեան յառաջխաղացութեան արշաւեցին գէպի հիւսիս, արեւելք, արեւմուտք եւ մաքրեցին Թրանսվալը: Գօմաթի Բօրթի եւ Լիթլթընի սպարակառուցն յետոյ՝ ալ պատերազմը գաղտնի համարուեցաւ: Պօէրները երկաթեայ շղթայի մէջ էին. իրենց համար Ռօտեղիայի ճամբան ալ բացուած էր, Բօրթիւկալի վատագիտութեանը շնորհիւ. բայց անդղիացիք եղած հպատակութեանց եւ Պօէրներու առկրուելով յուսահատութեան վրայ վատահիշով, զինուորական գործողութիւնները դժգոյսեցին եւ կամաց կամաց անզղիական զօրաբանակները սկսան անդղիա վերադառնալ:

Նախադէմ Սթէյն, որ ազատութեան ոգի-ին մարմնացումը եղաւ Պօէրներու համար, Տը Ուէթի հետ մէջտեղ ելաւ գործնալ Օրանժի մէջ. արդէն գիտենք թէ՛ ինչ զարմանալի իրադարձութիւններով լեցուն կռիւներ մղեցին անզղիացեաց դէմ: Եւ ինչ փայլուն յաջողութիւններ ունեցան. յաջողութիւններ՝ որք եւրոպացի ռազմագէտներուն զարմանքը շարժեցին եւ անպատմելի հիացում պատճառեցին. կրնանք ըսել թէ Տը Ուէթ իր զինուորական տաղանդով՝ օրուան հերոսը եղաւ, եւ այսօր իսկ պատերազմին մանրամասնութեանցը հետեւողները, սրբազան անհամբերութեամբ մը կ'սպասեն թէ՛ արդեօք Պօէր զօրավարը իր վերջին քաջագործութեանէն յետոյ (Տէվէթտորթի առումը) պիտի կրնա՞յ այս անգամ ալ ճողպրել անցեալ անպատկերուն պէս:

Թրանսվալի մէջ բաղդատաբար հանգարտութիւն կը տիրէր. Պօէր հրամանատարները փոքրիկ գործողութիւններով կը բաւականանային. բայց այսօր՝ կարծես Մարաշխաթին մեկնելուն սպասէին, այնպիսի յաղթութեանց լուրեր կը հասնին, որք անզղիական գրաւումը շատ խարսու վիճակի մը մէջ կը գնեն. երբ նկատի առնուի մանաւանդ որ բազմաթիւ զօրաբանակներ արդէն անդղիա վերադարձած են:

Լորտ Ռօպերթսի յաջողութիւնը՝ Լորտ Քիչնէր, Քարթմուի հերոսը, որ վերջին Սուտանի պատերազմովը աշխարհահռչակ համբաւ կը վայելէ իբր ռազմագէտ ու զինանական սպայ մը, իր տրակտեան միջոցներով պիտի կրնա՞յ արդեօք իրեն յանձնուած ծանր պարտականութիւնը կատարել. այս է անխուսափելի հարցը:

Վերջին հեռագիրները կացութեան որպիսութիւնը կը յայտնեն եւ պերճախօս պատասխան մը կուտան այդ հարցին:

«Լորտ Քիչնէր 12 դեկտ. հեռագրով կ'իմացնէ որ չորեքշաբթի օրը, Քիչնէնի զօրավարը ի Մէկալիսպուրկ, յարձակում կրած է 2500

Պօէրներէ, որոնց կը հրամայէին Տըլարէյ եւ Պայէրս:

«Քիչնէնի զօրավարը ստիպուեցաւ նահանջել: Հինգ անդղիացի սպայ սպանուած են»:

Անկէց յետոյ եկող հեռագիրները մանրամասնութիւններ կուտան կուռնի մասին:

«Զօրավար Քիչնէնի, արշալոյսին Նովեմբրտալտի մօտ յարձակում կրեց 2500 Պօէրէ: Առաջին յարձակումը ետ մղուեցաւ. բայց Պօէրները Քիչնէնի բանակետողին վրայ տիրող Մէկալիսպուրկի կատարը գրաւեցին, ուր Նօրթուպէրլամտ Ֆիւրլըրս գունդէն 4 դասակ պահակ գրուած էին: Քիչնէնի չէքօրտ քաջուեցաւ եւ բանակը գրաւ հովտի մը կեդրոնը: Կրօնը շատ կատաղի եղած է, գնդապետ Լէկիի, եւ Մոքսին, Մըրտօք, Աթքինս հարիւրապետները սպանուած են: Բրէթօրիայէն օգնագործք մեկնած են: Կուռնի պահուն Պրօսպուտ զօրավարը Քիչնէնի զօրավարէն 7 մղոն արեւմուտք կը գտնուէր Մէկալիսպուրկի հիւսիսային զառիվայրին մօտ»:

Գարձալ Եօհանէսպուրկէն հեռագիր մը ստապէ կ'ըսէ: «Նօրթուպէրլամտ ուր Քիչնէնի յարձակում կրած է Քիւրկէրտտօրթի մօտ է: Կոռնը կը շարունակուի դեռ եւ երկուստեք մեծ կորուստ կայ: Զօրավար Ֆրէնչ օգնագործով մեկնած է Եօհանէսպուրկէն: Կը վախցուի որ Նօրթուպէրլամտի չորս դասակները (մէկ դասակը 200 հոգի է) գերի բռնուած ըլլան»:

Ուրիշ հեռագիրներէ կ'իմացուի որ միեւնոյն օրը Պօէրները յարձակում ըրած են Լիթլթընի սպարակի, Բէթլէէմի, Վրէտի եւ Վրայէտի վրայ, այս վերջին քաղաքին յարձակման միջոցին Անդղիացի Գեր-Գիւրապետ Կուռնի սպանուած է:

Իսկ Լօրէնսօ Մարքեզէ ուրիշ հեռագիր մը կ'ըսէ թէ՛ կացութիւնը շատ տագնապալից է, կը կարծուի որ 1500 Պօէր պիտի յարձակին քաղաքին վրայ, զինուորները հրաման ստացած են պատնէշաւորուելու եւ վայրկեան առ վայրկեան կուռ պատրաստ գտնուելու:

Զօրավար Լուի Պօթա ալ 1800 Պօէրով Սթանտերթընէ 20 մղոն հեռի է. ամսոյս 15 ինժամագրութիւն տուած է բոլոր Պուրկըրներուն, մեծ ժողովրդի մը համար:

Պօթա զօրավարին գումարտակը պաշարաբարձ կառք մը գծէն շեղեցնել տուած է Սթանտերթընի մօտ, բայց մինչեւ գծին շահուելը անզղիացիք յաջողած են Պօէրները հեռու պահելու:

Շիտակը պատերազմը վերջացած կարծուած միջոցին, այսչափ տարբեր կէտերու վրայ կուռներ՝ մեզի կարծել կուտան թէ՛ պատերազմը դեռ շատ հեռու է վերջանալու:

Թրանսվալի պատերազմը, Սիւրիփոսի ժայռը եւ կամ Գանալիսներու կարան է, լինանալիք չ'ունի:

ԼԵՒՈՆ

ԾԱՆՈԹ. — Վերջին հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ Տը Ուէթ ինչպէս որ գիտենք, Նօքս զօրավարէն կը հալածուէր եւ իր ճամբան ալ կտրուած էր, Թօպօնքլէի մօտ յարձակած է անզղիացեաց վրայ եւ յաջողած է զինքը պաշարող շղթան ճեղքելով անցնել. միայն 22 գերի, երկու թընդանօթ (Տէվէթտորթի մէջ առածները հարկաւ) քիչ մը ռազմամթերք եւ պաշար ձգեց իր անդղիացեաց ձեռքը: Տը Ուէթ՝ անժխտելի կերպով երկրորդ Նաբօլէօն մ'է, եւ իր առջեւ կը նստմանն Գիչնէրի ու Ռօպերթսի պէս ռազմագէտներ. որովհետեւ անոնց նման իր կուռակը զօրաց բազմութեան տեսակէտով ահագին առաւելութիւններ չ'ունի:

Բնաշխարհիկ Բաուարնի Ա. Բ. պրսկներուն համար տեսնել Դ. երեսը, ժողովրդական Տպարանի յայտարարութեան մէջ:

ԵՐԱՋՍ

Հեռու քեզնէ, շատ հեռու... Էի միտազնած հորիզոնի մը տակ՝ ուր աստղերը կը թռչտէին...

Թաղուած խոկմանցս մէջ անուշ... աւելի կ'զգայի՝ քան կ'ապրէի, տարտամ մտածումներս կը սաւառնէին հոն...

Քեզնէ բաժնուած միտակ զգացի ինքզինքս անհունի անմահութեան մէջ... մուրալներուն ետեւ... սիրտս սեղմուեցաւ...

ԱՐՏԱՃԵՍ ՄՍՐԼԵԱՆ

Թ Ե Ր Թ Յ Ն

Ի Ն Չ Ո՞Ւ Չ Ե Ն Ք Յ Ա Չ Ո Ղ Ի Ր
ՏԵՍԻԼ Դ .

Նիստ Գործ . ժողովոյ

(Շարունակորիւն նախորդ քիւնէն)

ԲԱՄՊԱԿԵԱՆ . Եւ կամ մի պարահանդէս կազմակերպելու...

ՇԱԹՅԱՆ . (Ներս մանկելով) ո՛չ պար եւ ո՛չ պարահանդէս, այլ ներկայացում պիտի լինի այս անգամ .

ԱՄԵՐԻԿԵԱՆ . Այո՛, այո՛, նստեցէ՛ք եւ ըսէ՛ք մեզի թէ՛ ուստի դաք կամ յո՛ երթաք, որ մեզի աշխարհ սպասցնել տուիք, չ'լինի թէ Մաթարիայ գացած էիք, եւ դարձեալ չողեկաւքէն կուգաք այսպէս ուշացած . . .

ՇԱԹՅԱՆ . (չուարած) Ո՞վ է Մաթարիայ գացողը . . .

ԱՄԵՐԻԿԵԱՆ . Միշտ միեւնոյն թրէնո՞վ կ'երթաս կուգաս . . .

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐԷ բաղկացեալ Հայ Թատերասիրաց խումբը, աշակցութեամբ յատկապէս կազմուած Մանախմբի մը, առաջիկայ կիրակի, Դեկտ. 23, Շարա Ապտիւլ-Ալիզի Եղիպտական Փատրոնին մէջ պիտի ներկայացնէ ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, կամ Շաւարշանի Պատերազմը .

Նորակազմ խումբը իր խնամով բրած պատրաստութիւններով իրաւունք ունի յուսալու թէ մերազնեցի կողմէ պէտք եղած քաջալերութիւնը պիտի գտնէ .

ՊԱՋԱՐ ՄՈՒՐՈՒԹԻ Լսարան-Ընթերցատան մէջ կիրակի օրը ատենաբանեց Տիար Արմենակ Մալումեան .

Թէպետե բանախօսութիւնը շատ կարճ էր, ինչպէս որ այլ ծանուցուած էր, սակայն Տիար Մալումեան իր սեղմեալ նախադասութիւններուն մէջ յաջողեցաւ ամփոփել Լսարան-Ընթերցատան մը պէտքը եւ անոր գոյութիւնը պահպանելու միջոցները .



Դիւանս պատիւ ունի ղեկուցանելու արգոյ հասարակութեան, Պաշար-Մուրուրի Լսարան-Ընթերցատան Ընկերութեան նորընտիր Գործ . ժողովոյ պաշտօնական կազմակերպութիւնը, եւ ներկայացնելով անոր պատուաբեր ու աչալուրջ անդամները՝

- Տիար Ա . Մ . Պէրպէրեան Ատենապետ
» Ա . Մալումեան Ատենադպիր
» Ե . Գազանճեան Հաշուակալ
» Գ . Գրիգորեան Գանձապահ

Եւ Տիարք Մ . Խոհարարեան, Ա . Սեգրաք, Ա . Էվլեան խորհրդականք, կը փութայ ներկայիւս հրապարակաւ վաւերացնել այս կազմակերպիչ մարմնոյն օրինաւոր ընտրութիւնը, շնորհակալութեամբ եւ բարեմաղթութիւններու անկեղծ ու խորին հաւատարմութեամբ .

Ի Դիմաց Լսարան-Ընթերցատան Ընկերութեան Մայր-Իււանի Ատենադպիր Ատենապետ Կ . ՈՒՋՈՒՆԵԱՆ Ա . ՊԱԼԵԱՆ Գահիրէ 18 դեկտ . 1900

ՇԱԹՅԱՆ . — (բարկացած) գուք կը կարծէք որ ես քէֆիս համար կ'երթամ կուգամ : Բնաւ քան մը չէք կրնար կամ չէք ուզեր ընել . ես Մաթարիայ կամ Չէթուն եթէ կ'երթամ կուգամ, պատճառը ա՛յն է որ կ'ուզեմ յառաջիկայ եղանակին համար չքեղ ներկայացում մը պատրաստել . . .

ԲԱՄՊԱԿԵԱՆ . — Այո՛, սիրողներու խումբն ալ պէտք ընտրեալ լինի .

ՇԱԹՅԱՆ . — Ո՛չ թէ խումբը, այլ նախ պէտք է ողբերգութիւնը պատրաստել . . .

ԱՄԵՐԻԿԵԱՆ . — Չքնա՛ղ գաղափար . . .

ԹԱԹՅԱՆ . Սքանչելի՛ բան . . .

ՇԱԹՅԱՆ . — Գործը տակաւին յայտնի չէ, եթէ լինի, շատ գո՛ւ պիտի լինիք :

ԱՏԵՆԱՊԵՏ . — Արդեօք կրնա՞ք փոքրիկ գաղափար մը ունենալ . . .

ՇԱԹՅԱՆ . — Տեսէ՛ք ինչպէս է . երկու կարճ բառով բացատրեմ ձեզի . հոս Տիկին մը կար՛ որ ողբերգութեան տետրակ մը ունէր եւ այդ տետրակը՝ հանգուցեալ ընկերութեան մը նուէր ըրած էր : Հանգուցեալ ընկերութեան գոյքերուն մէջ փնտռեցինք, բայց չ'գտնուեցաւ . այժմ կ'ասածիւրով որ այդ հանգուցեալ ընկերութեան հանգուցեալ Ատենապետը հետը առած լինի զայն — որովհետեւ ինքը Աղէքսանդրիա մեռած է : — Բարեկամուհի մը գիտեցի, ինչպէս որ Աղէքսանդրիա իր բարեկամին գը-

ՆԱՄԱԿԱԴՐՈՇՄԻ ՀԱՒԱԲԱՇՈՅ

Այս պահուս մեծ յծուով նամակագրոյններ եւ քարգեր կան որք թրանովալի պատերազմով ծագում առած են եւ որք մոլեգնոտ խանգով մը կը փնտռուին ընդհանուր աշխարհի մէջ .

Ամենէն առաջ պաշարեալ Մէֆքիւնի գրոյնները, երկու հատ, որոնք մէջտեղ ելան պաշարեալ քաղաքին մէջ . մէկուն վըրայ կայ Պէյտըն Բօուէլի գլուխը, իսկ միւսին վրայ հեծելանիւ մը .

Ապա շարք մը Բարեխուսոյ գլխու գըրոյններ կան, որք Պօէրնեբը ձեռք ձգած են իրենց յարձակողական շարժմանց մէջ եւ վըրան դրած են Հարաւ Ափրիկէի Հասարակապետութեան սկզբնատուերը : Անգղիացիք ալ իրենց կարգին ձեռք ձգեցին թըրանսվալի եւ Օրսնժի գրոյնները, որոնք վըրայ աւելցուցած են առժամանակեայ կառավարութեան սկզբնատուերը .

Վերջապէս կայ նաև շարք մը քարգեր Լօրէնցօ Մարքէզէն եկած, որք իրենց վըրայ կը կրեն Հասարակապետութեանց գըրոյնի հետ, այն Հիւպատոսարաններու զինանշանները՝ ուրկէց անցած են .

ՀՆԼՎԱՆԻ ՎԻՍԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns of numbers: 714, 8460, 8252, 6164, 3637, 505; 906, 1047, 1528, 2100, 2161, 2413; 2427, 2570, 3005, 3305, 3516, 3872; 3752, 4525, 5125, 6124, 7337, 7575; 7940, 9257, 9865

ՀՐԷԻՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

Table with 6 columns of numbers: 4152, 1512, 6194, 2929, 150, 305; 361, 645, 818, 900, 1022, 1343; 1970, 2192, 2229, 3175, 3865, 3938; 5136, 5181, 5305, 5983, 5989, 6309; 6471, 6996, 8311, 8425, 8434, 8951

րէ, լուսահողի Ատենապետի գոյքերուն մէջ փնտռելու եւ գտնելու ատեն մեզի ղրկելու համար, բայց քանի անգամ է որ կ'երթամ, եւ տակաւին պատասխան եկած չէ . եւ երբ ես այսպիսի յոգնութիւն եւ զոհողութիւն Ընկերութեան սիրոյն համար յանձնեմ, դուք տասը վայրկեան սպասելուդ համար զիս յանդիմանելու կ'ելլէք եւ նոյն իսկ քմծիծաղով կը խօսիք . այդ ես չեմ հասկնար . . .

ԱՄԵՐԻԿԵԱՆ . — Երբ ներկայացումը Ընկերութեան անունով պիտի արուի, դուք պարտ էիք մեզ հաղորդել այդ խնդիրը, որ եթէ ընդունուէր՝ Ընկերութիւնը իւր անունով ուղէր տետրակ եւն . փնտռել ու գտնալ, այն ատեն ո՛չ քեզի յոգնութիւն եւ ո՛չ ալ մեզի սպասելու նարկ կը մնար : Ահաւասիկ երթալու թիւններով ժամանակն ալ անցաւ, եւ չ'կրցանք հասկընալ թէ ինչ կարողութիւններ պիտի ընենք վաղուան նուագահանդէսին համար .

ՇԱԹՅԱՆ . — Վաղուան համար ինչ պիտի լինի, դուք ժամանակին եկէ՛ք եւ, ումեն քան տեղն ի տեղը կը կարգադրենք . արդէն տոմսերը ամբողջապէս ցրուելու են, այնպէս որ ժամանակը անցած լինելով ժողովը ատանց բացուելու պիտի գոցուէր . երբ ներքին Տնօրէնը ներս մտնելով իմաց տուաւ թէ՛ պարտն մը, որ ազնըւական համարուելու արժանիքը չ'ունի, Պիլարտօսի սրանը մտած սեյիւր կ'ընէ : Արդ՝ ձեր ուրոյնմն ինչ է այդ մասին . (ամէնքը մէկէն) դո՛ւք գո՛ւրս, ինչպէս որ ըրիք միւս Պարոնին : (Շարունակեցի)

ՄԱՆԿԱԲԱՐՁ
ՏՐԿԻՆ ԾՈՌՆԻ Կ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ
Շարա-Ապսիդ-Ազիլ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրուհիքէն փոխադրած է Շարա Ապսիդ Ազիլ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին դիմաց, Անճէտ պէյ Ապսիդ Բազզիի 20 թիւ սեփականութեան մէջ:
Տիկին Սօֆիկ Ազգապետեան իւր փոքր՝ Բուրճեմար եւ յաջողակութեամբ արդէն ձանթ ըլլալով գահիրէրնակ ազգայնոց եւ ֆոյն իսկ օտարաց, աւելորդ կը համարուի զայն յանձնաւորել իւր խնամոցը պէտք ունեցողներուն:
Վկայեալ ազգատներուն համար ձրի դարմանում:

ԻՊԵՆՏԻՈՍ Կ ՍԱՐԱՑԵԱՆ
ԳԵՐՁԱԿ
ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՅԷ
Շարա Պապ - Էլ - Հասիս Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներէ ի վեր հանրածանօթ Անդղիացի վաճառական - զերձակ ժօՆ ԳՕԼԱՔՕԹԻ նման կարեւոր տան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նորութիւններուն կատարելագոյն հմուտ եւ փորձառու, այս անգամ հաստատուած է հանգուցեալ Նուպար Փաշայի ծայրտին դիմացը, նորաչէն խանութներուն մէջ:

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պատ. յաճախորդը ըստ ամենայնի դո՛ւ պիտի մնան, արհեստի նորութիւն տեսնելով, նորաձեւութեանց զանազանութիւններ գտնելով, եւ մանաւանդ որ ամենէն կարեւորն է, չափաւոր վճարումներու փոխան, ձեւաւոր եւ ճաշակաւոր զրեւտներ ունենալով:

ՄԻ՛ ՄՆԱՔ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՈՒ
Քանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատուն մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ԱՄԵՐԻ նիքէլ, կոթէն լարուղ սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւ տրեալ է Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժա խոցոյցներ 120 ՂՐԵ է սկսեալ մինչև 2500 ՂՐԵ: Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և քարտէ ժամացոյցներ. պատի և բոնու լի բազմազան Բանտիւ շերտ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք:
Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան փոխակապաններու:

ՕՐԱՑՈՅՑ
Պարզ եւ Ընդարձակ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ս. ՓՐԿՁԻ ԱԶԳ. ՀԻՒԱՆԳՈՒՆՈՅԻ ՆՈՅՆՊԷՍ
ՕՐԱՑՈՅՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
Պարզ եւ Ընդարձակ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
1901 ՏԱՐԻՑ
Կը վաճառուի Կ. Երզնկացեանի խանութը Ի Շարա Ապսիդ-Ազիլ
ԾԱՆՕԹ. — Երջնկացեանի հղած յանձնարարութիւնը քիչ քիչ կը կատարուին:
Տարագրութիւն ժՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ


Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԻՐ
Պալաքի փողոց. Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթլ Օրթէլի ճիշդ դիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից:

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ
Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներքն են եւ ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է:

400 է աւելի վիսյականներով եւ մեքենանով վարձատրուած, Երաշխատեալ մեքենաներ,
ԱՄԵՆԷՆ ՄԵՍ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ
Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է:

ՀԱԳԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՅ ԿՎՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե. Բ. ԵՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ ի յասկանչին:

Ձրի գահեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԵՐ մեքենան յից համար, յաճախորդաց տուններուն մէջ:
Վճարմանց Դիւրութիւն
Փոխանակութիւններ մեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի մեքենայից

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
ԵՒ ԹՂԲԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
«ԱՐՇԱԼՈՅՍ»
ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԳԻ ՍԿԻՂԲԸ
Օսմանիյէ դեղատանին դիմացի փողոցին մէջ:

- Ժողովրդական տպարանին մէջ կը պատրաստուին:
- Այցեխեր, Երջնկացեանի, Գլուխ, Հրախրապրեր, Մանագրներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տնտես և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւններ:
 - Կը վաճառուին հետեւեալ գրքերն:
 - 1. ԲՆՍԵՆՍԻՆԻ ԲԱՌԱՐԱՆԻ Ա. և Բ. պրակներն, որոնք նոր հասած են և որոց մասին արդէն խօսուած է «Արշալոյս» մէջ:
 - 2. ՈՐՐՈՒՆԻ, որ նոյնպէս նոր հասած է և որոյ ի թուրքիա մուտքը, ինչպէս կը լսենք, անդիւրած է եղեր:
 - 3. ՀԱՌԱՔԱՇՈՅ հայոց ժողովրդական երգերու, Փարիզ տպագրեալ, Տնօրինութեամբ Տ. Լեոն Եղիազարեանցի:
 - 4. ՉՈՒԱՐՃԱԼԻ Անիքթոններ և ժողովրդական վէպիկներ կամ Մարդկային կենաց Վարագոյրը և ուրիշ նոր հրատարակութիւններ:

Ա Ձ Դ

Եզրպտարնակ ազգայնոց կը փութանք ծանուցանել թէ՛ Տիար Կարապետ Նաւասարդեան քաղաքէն մեկնած ըլլալով այժմ Եզրպտոսի համար Արևելեան Մամուլ ներկայացուցին և Գործակալն եղած է Տիար Օհան Խոտամեան, որուն պէտք է գիմել սոյն թերթին բաժանորդագրութեան ևն. ի մասին:

Յիշեալն պատրաստ է փափաքողաց համար բերել տալ ամեն տեսակ զարդակներ, գիտական, պատմական և այլ վիպական գրքեր ամենայն փութով և չափաւոր գնով:

Քաղաքէն հետոս բնակող անձեր պէտք է իրենց յանձնարարութեան հետ յղեն փոքրիկ զուարթ մը ևս կանխավճար իւր հասցէին յ'Ազգ. վարժարանն ի Տարպ-Էլ-Կինէն:

Ա. ՊԱՆԵԱՆ
Մ Ա Թ Ի Լ Տ
(Գաղթականաց կեանքէն)
ԳԻՆ 50 ՄԱՆԹԻՄ
ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՍ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ
ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:
Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինչպատ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է բնկերութեան մէկ միլիար աւելի է:
Ս. ԼԷՕՒՄ Ընդհանուր ներկայացուցիչ և Գահերի
Աշխարհի մէջ գտնուող ուրիշ և է ինկերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրաշալուրակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:
ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործակատար յ'Ազգ. քանդակար